

SERPAZAN HAYR:

Is this for filing or should I bring  
to your attention at a certain date?

ST

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
Գլխավէնս, Օհայօ



ST. GREGORY OF NAREK  
ARMENIAN CHURCH

REV. FR. DIRAN PAPAŽIAN  
PASTOR

Area Code 216—Tel. 381-6590

666 Richmond Road  
Cleveland, Ohio 44143. U.S.A.

12 ցունիս, 1984

Գեր. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ,  
Առաջնորդարան Հայոց,  
Ի նիւ Եորկ, Ն.Ե.,

Սրբազան Հայր,

Ձեզի ծանօթ է որ անցեալին շանացեթ էինք ապսպրել Հայկական ոճով շին-  
ուած արծաթեայ եւ ոսկեգօծուած սկիհ մը մաղզմայով միջին եւ բերել տալ զայն  
Ս. Էջմիածնէն ի պէտս Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյս գործածութեան, եւ  
բարերարն ալ գտած էինք, եւ սակայն դժբաղդաբար չէինք յաջողած ապահովել  
զայն, այն պատճառաւ որ այն օրերուն թանկարժէք եկեղեցական սպասներու վրայ  
արգելք դրուած էր որ դուրս հանուէին խորհրդային Միութեան սահմաններէն:  
Եւ ուրեմն մեր հետապնդումն ալ կասեցաւ առժամապէս մինչեւ որ աւելի բարե-  
նըպատ պայմաններ ստեղծուէին:

Վերջերս երբ Միոն Սրբազան մեր մէջ կը գտնուէր՝ յայտնեց թէ՛ ներկայիս  
այդ սեղմումները վերցուած էին եւ թէ թոյլտուութիւն կը տրուէր հանել երկ-  
րէն դուրս՝ նմանօրինակ եկեղեցական սպասներ կամ թանկարժէք իրեղէններ, ի  
պէտս արտասահմանի Հայ Եկեղեցիներու գործածութեան, Վեհափառին գրաւոր ար-  
տօնութեամբ եւ ձեռամբ Հոգեւորականի: Արդ որպէս զի Վեհափառ այդ արտօ-  
նագիրը տայ հարկ է որ թեմի մը Առաջնորդը Վեհափառին ուղղեալ նամակ մը գրէ  
փափաքուած սպասին մասին եւ յղէ զայն իրեն, ձեռամբ այն հոգեւորականին  
որու միջոցաւ խնդրոյ առարկայ սպասը պիտի հանուի երկրէն դուրս: Այս մասին,  
եթէ կը յիշէք ձեզի առիթով մը տեղեկացուցած էի եւ դուք ալ ձեր կարգին ինծի  
թելադրած էիք որ ձեզի նամակ մը գրեմ առ ի յիշեցում, եւ այդ գործն է ահա-  
ւասիկ զոր կ'ընեմ ներկայիս:

Մեզի տրուած լուրերուն համաձայն ներկայիս Հայկական այդ սկիհներէն մօտ  
երկվեցեակ մը տրամադրելի կան Վեհարանին գանձատան կամ ոսկերչատան մէջ ծա-  
խու: Էջմիածին գացող-եկող եկեղեցականներ շնն պակսիր մեր թեմէն, եւ անոնք  
բոլորն ալ ձեր տնօրինութեամբ եւ գիտութեամբ միայն կ'ուղեւորին դէպի Ս. Էջ-  
միածին: Ձեզմէ պիտի խնդրէինք ուրեմն որ՝ յարմար առիթով մը՝ բարեհաճէիք եկե-  
ղեցականի մը միջոցաւ եւ կամ ալ ուղղակի ձեր միջոցաւ, եթէ կը յուսաք մօտիկ  
ապագային Էջմիածին ուղեւորիլ Եպիսկոպոսաց ժողովին մասնակցելու համար, այդ  
սկիհը բերել տայիք եւ կամ ալ բերէիք:

Եկեղեցւոյս կնքահայր եւ բարերար, բարեյիշատակ Տ. Գեղամ Կէօքճեանի  
փափաքն էր եղած միշտ՝ օժտել եկեղեցիս Հայկական ոճով շինուած սկիհով մը,  
եւ ներկայիս անոր այրին՝ Տիկ. Խլորանս Կէօքճեան իրազեկ է իր սիրեցեալ հո-  
գելոյս ամուսնոյն սոյն փափաքին, եւ պատրաստ է նման նուէր մը ընել եկեղեց-  
ւոյս, ի յիշատակ իր ամուսնոյն, անոր ի կենդանութեան յայտնած փափաքը գոր-  
ծադրելով, ինչ որ իր ամուսնոյն մահէն վերջը ուխտի մը կամ կտակի մը հան-  
գամանքը կ'ստանայ:

Շար . . . . .

Շար...

Այն օրերուն երբ ձեռնարկած էինք այս գործին կարգադրութեան, մեզի տըր-  
ւած տեղեկութեանց վրայ հիմնուելով, նման սկիհի մը մաղզմայով միասին արժէքը  
զնահատուած էր՝ ապսպրանքի վրայ՝ հազար տուար. այս գինին իրազեկ է Տիկ. Կէօթ-  
նիեան եւ յանձառու է վճարել, եթէ երբէք կարելի ըլլայ ձեռք բերել զայնեկե-  
նկեղեցւոյս գործածութեան համար: Զուսանք գինը ատկէ աւելի չ'ըլլար, պակաս  
ըլլալու պարագային հոգ չէ:

Զեզմէ շատ պիտի խնդրէինք որ ներկայի թոյլատու պայմանները նկատի ունե-  
նալով այս գործը հետապնդէիք, որպէս զի ի վերջոյ տարիներէ ի վեր վայելա-  
ուած այս երազը՝ եկեղեցիս օժտելու հայկական սիրուն ոճով սկիհով մը՝ իրակա-  
նանար, թէ իսկ յետ մահու:

Կը ներէք այս յաւելեալ տաղտուկը:

Հաճեցէք ընդունիլ մեր կանխայայտ շնորհակալութիւնները ձեզի, ձեր ստանձ-  
նելիք գերին համար այս գործին բարւօք կարգադրութեան մէջ:

Խոնարհաբար Աղօթակից,

*M. S. S. S. S.*

Տ. Տիրան Ա. Բհյ. Փափագեան, Հովիւ